

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՎԿ

### Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10, #122, հեռ. 51-81-81, էլ. փոստ

[info@firstmortgage.am](mailto:info@firstmortgage.am)

Հաշվետվություն թիվ 01, 03.06.2020թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,000 հատ	8,000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100,000 ՀՀ դրամ	100 ԱՄՆ դոլար

**Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**22 մայիսի թվականի N ՏՊ-003-05/20**

**ք. Երևան**

**«Առաջին հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից թողարկած ապահովված հիփոթեքային պարտատոմսերը տեղաբաշխման թույլատրելու մասին**

Հիմք ընդունելով «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Տեղաբաշխող) 2020 թվականի մայիսի 21-ի դիմումը «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 6.4% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով 7,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումը թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման պատասխանատուի կողմից 2020 թվականի մայիսի 22-ին ներկայացված եզրակացությունը:

Ղեկավարվելով Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի տեղախաշխման կազմակերպման կանոնների» 17-րդ գլխի 98) կետով և Բորսայի կանոնադրությամբ 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 6.4% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով 7,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMFMGCB24ER7 ծածկագիրը, թույլատրել տեղաբաշխման Օպերատորի տեղաբաշխման հարթակում՝ շնորհելով FMGCB4 հապավումը:
2. Տեղաբաշխումը կազմակերպել ս.թ. մայիսի 26-ին՝ փակ ստանդարտ աճուրդի եղանակով՝ բացառելով գնման ոչ մրցակցային և լրիվ բավարարմամբ պայմաններով գնման հայտերի՝ ներկայացումը տեղաբաշխման համակարգում:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն**

**Հ Ա Յ Կ Ե Գ Ա Ն Յ Ա Ն**

**Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**22 մայիսի թվականի N ՏՊ-002-05/20**

**ք. Երևան**

**«Առաջին հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն  
ասհմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից թողարկած ապահովված  
հիփոթեքային պարտատոմսերը տեղաբաշխման թույլատրելու մասին**

Հիմք ընդունելով «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Տեղաբաշխող) 2020 թվականի մայիսի 21-ի դիմումը «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈւՎԿ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 10.5% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով 900 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումը թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցական պատասխանատուի կողմից 2020 թվականի մայիսի 22-ին ներկայացված եզրակացությունը:

Ղեկավարվելով Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի տեղախաշխման կազմակերպման կանոնների» 17-րդ գլխի 98) կետով և Բորսայի կանոնադրությամբ 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈւՎԿ ՍՊԸ-ի 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 10.5% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով 900 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMFMGCB23ER9 ծածկագիրը, թույլատրել տեղաբաշխման Օպերատորի տեղաբաշխման հարթակում՝ շնորհելով FMGCB3 հապավումը:
2. Տեղաբաշխումը կազմակերպել ս.թ. մայիսի 26-ին՝ փակ ստանդարտ աճուրդի եղանակով՝ բացառելով գնման ոչ մրցակցային և լրիվ բավարարմամբ պայմաններով գնման հայտերի ներկայացումը տեղաբաշխման համակարգում:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն**

**Հ Ա Յ Կ Ե Գ Ա Ն Յ Ա Ն**